Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Շ 973

Գիտաժողովը նվիրվում է
Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Արտակ Մաղալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝
Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բաբխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բաբկեն Հարությունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Աբրահամ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ԱՂԱՍԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԷԹՆԻԿ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇՈՒՇՎԱ ԳԱՎԱՌՈՒՄ XIX դ. ՎԵՐՋԻՆ

Հումանիտար մշակույթն առանձնակի տեղ ունի մշակույթի համակարգում, քանի որ այն խոսում է կրող ժողովրդի զարգացման որոշակի աստիճանի մասին: Ներառելով մշակույթի այնպիսի ոլորտներ, ինչպիսիք գիտական, կրթական, գրահրատարակչական, թատերական և արվեստի այլ ոլորտներն են, այն պահանջում է մշակութային այս կամ այն երևույթին մասնագիտական տիրապետման բարձր մակարդակ և դրա վերարտադրությունն ապահովող փորձի փոխանցման ունակություններ: Հումանիտար մշակույթի զարգացման առանցքային նախապայմանը այն կրող ժողովրդի մասնագիտական դիֆերենցվածության բարձր աստիճանն է, ուրբանիզացիոն մղումները և քաղաքային զբաղմունքների բազմազանությունը: Հարկ է նկատել, որ բոլոր ժողովուրդները չէ, որ իրենց զարգացման տվյալ փուլում անպայման կարող են ունենալ հումանիտար մշակույթ: Երբեմն որոշ հետազոտողներ փորձում են հումանիտար և հոգևոր մշակույթները նույնացնել, սակայն դա սխալ է այն պատճառով, որ հոգևոր մշակույթը միշտ չէ, որ պահանջում է մասնագիտական մոտեցում:

Հումանիտար մշակույթը քաղաքային երևույթ է, քաղաքային կյանքի ու կենսակերպի վերարտադրության կարևոր բաղկացուցիչը: Կարելի է ասել, որ այս կամ այն քաղաքի զարգացածության աստիճանի մասին վկայող առանցքային բաղադրիչներից մեկը հենց հումանիտար մշակույթն է: Այս առումով հատկապես հետաքրքիր է ուսումնասիրել բազմազգ բնակչությամբ քաղաքներում հումանիտար մշակույթի էթնիկ պատկերը: Շուշին մոնոէթնիկ չի եղել և կարևոր է ուշադրության արժանացնել քաղաքի զարգացման շրջանում, հատկապես՝ XIX դ. վերջին ու XX դ. սկզբին, հումանիտար մշակույթում էթնիկ ներգրավվածության առանձնահատկությունները:

Շուշի քաղաքի և գավառի բնակչությունը կազմել են հայերը և թուրքերը, որոնք 1895 թ. գավառում ունեցել են 58% հայ և 42% թուրք, իսկ քաղաքում՝ 61,8 % հայ և 38,2% թուրք հարաբերակցություն: Ի դեպ, եթե դիտարկենք 1886-ից մինչև 1895 թ. բնակչության կազմի փոփոխության դինամիկան, ապա գավառի մակարդակով հայերի ու թուրքերի հարաբերակցությունը շատ քիչ է փոխվել՝ 1886-1895 թթ. հայերը 56,2%-ից դարձել են 58%, թուրքերը՝ 43,8%-ից 42%: Սակայն քաղաքային բնակչության տեսակարար կշռում փոփոխությունները զգալի են: Այսպես, 1886-1895 թթ. հայերի թիվը քաղաքում 54,5%-ից աճել է 61,8 %, իսկ թուրքերինը 45,5%-ից իջել է 38,2%-ի:

Շուշիում հումանիտար մշակույթի զարգացման համար կարևոր դեր են խաղացել քաղաքային տնտեսական զբաղմունքները և արհեստագործությունը: Շուշիի գավառում XIX դ. վերջին, ըստ Ե. Լալայանի վկայության, գյուղերում արհեստներով զբաղվել են բացառապես հայերը, իսկ քաղաքում արհեստավոր թուրքերը կազմել են աննշան տոկոս: Հատկանշական է, որ գործարանային աշխատողների մեջ, եթե գավառի մակարդակով (ներառյալ քաղաքը) հազար հոգու հաշվով ընկել է 11,9 մարդ, ապա հայ բնակչության մեջ հազար բնակչի հաշվով այդ թիվը կազմել է 23,4 մարդ: Այսինքն՝ տնտեսական գործընթացների ոլորտում տեղի ունեցող ուրբանիզացիոն միտումներին առավել ճկուն արձագանքողը եղել է հայ բնակչությունը: Իսկ եթե նկատենք, որ ասվածը վերաբերում էր ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց, ապա կարելի է որոշ առումով խոսել մինչև ընտանեկան հարաբերությունների մակարդակ ուրբանիզացիոն գործընթացների ներթափանցման մասին: Ճիշտ է, ժամանակակիցներից շատերն այս երևույթին մոտեցել են որոշակի մտավախություններով՝ դրա մեջ տեսնե-

լով ավանդական կենսակերպի քայքայմանն ուղղված վտանգ, սակայն տնտեսական զբաղմունքների մեջ ներգրավվածությունը հայ բնակչության մեջ ձևավորել է պահանջմունքների զարգացում: Տնտեսաարդյունաբերական ոլորտ ներգրավված բանվորությունն ու արհեստավորությունը, ցանկանալով ընդօրինակել քաղաքային բուրժուազիային, հաճախ արդեն չեն բավարարվել գոյատևման նվազագույն պահանջմունքներով և ձգտել են բարելավել ոչ միայն իրենց կենցաղային պայմանները, այլ նաև փոխել կենսակերպը: Պատահական չէ, որ տնտեսական զբաղմունքների աճին զուգահեռ և այդ ոլորտներում գլխավորապես հայ բնակչության ներգրավվածությունը խթանում է նաև կրթական պահանջմունքների աճը:

Հումանիտար մշակույթի նշված ոլորտի զարգացման վրա տնտեսական գործընթացների ազդեցությունը ակնառու է դառնում այդ բնագավառի որոշ վիճակագրական տվյալների ներկայացմամբ: Դպրոցական տարիքի երեխաների մեջ հայերի տեսակարար կշիռը կազմել է 52 %, իսկ թուրքերինը՝ 22 %: Կրթությամբ հետաքրքրվածության այսպիսի ցուցանիշը բավականին բարձր պետք է համարել: Այս թվային ցուցանիշը ցույց է տալիս, որ քաղաքի զարգացման հեռանկարն արդեն իսկ լուծված էր հօգուտ քաղաքի ազգաբնակչության հայկական տարրի, քանի որ քաղաքային մշակույթի և ընդհանրապես կյանքի զարգացման ինդիկատորը հենց հումանիտար մշակույթն է: Իսկ եթե վերցնենք ուսման որակի մասին դատողություններ անելու հնարավորություն տվող տվյալները, ապա բավական է միայն համեմատել մեկ աշակերտի վրա դպրոցի կողմից կատարվող ուսման ծախսերի պատկերը.

- ռեալական դպրոցում - 112 ռուբլի
- քաղաքային դպրոցում – 49 ռուբլի
- հայոց թեմականում – 27 ռուբլի
- թուրքական դպրոցում – 12 ռուբլի:

Այսինքն՝ ակնհայտ է, որ հայկական դպրոցներում աշակերտներն առավել բարձր որակի ուսում են ստացել, և ուսման

գլխավոր նպատակը ոչ միայն գրագիտության ապահովումն է եղել, այլև կրթությունը խորացնելու հնարավորություն ընձեռող գիտելիքների ձեռքբերումը: Հայ բնակչության մեջ բարձր են եղել նաև կրթության մեջ ներգրավվելու տեմպերը: Պահանջմունքների տեսանկյունից երեխաներին կրթության տալը հայկական միջավայրում ընդհանրապես, բայց քաղաքներում, այդ թվում և Շուշիում մասնավորապես XIX դարավերջին հայկական ընտանիքներում առաջնայինների ցանկում է եղել: Այն ոչ միայն դիտարկվել է որպես կյանքում առավել ապահովված ապագա ունենալու միջոց, այլ նաև կարևոր դեր է խաղացել սոցիալական հարգի դերերի աստիճանակարգում տվյալ մարդու ու ընտանիքի դիրքը բարձրացնելու տեսանկյունից: Հատկանշական է, որ հումանիտար մշակույթի մի ոլորտի զարգացման ցուցանիշներն աստիճանաբար խթանում են մեկ այլ ոլորտի զարգացումը: Կրթական մշակույթի զարգացումը նպաստում է գրահրատարակչական ոլորտի ու գրադարանային մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը: 1989 թ. մարտի 10-ին Հայոց Բարեգործական ընկերության կողմից Շուշիում հիմնադրվում է գրադարան-ընթերցարան, որտեղ բացի հայ հեղինակներից եղել են նաև համաշխարհային գրականության դասականների ստեղծագործությունները: Ամենից ընթերցվող հեղինակներն են եղել հայ, ռուս և եվրոպական դասականները: Հատկանշական է, որ չնայած գրադարանը աշխատել է դեֆիցիտով, սակայն պահպանվել է ինչպես ընկերության, այնպես էլ քաղաքի հայերի ֆինանսական աջակցությամբ:

Գրադարանից օգտվողների թվի ներկայացումը թույլ է տալիս խոսել նաև հումանիտար մշակույթի այս ոլորտի զարգացման էթնիկ առանձնահատկությունների մասին: 1989–1999 թթ. ժամանակահատվածում գրադարաններ հաճախողների մեջ հայերը կազմել են 85%, ռուսները՝ 8%, թուրքերը՝ 4%, և այլազգիները՝ 3%:

Հումանիտար մշակույթի մեկ այլ՝ պարբերականներին վերաբերող թվային տվյալները նույնպես խոսում են հայ

բնակչության օգտին, քանի որ ամենից ընթերցվողը հայկական պարբերականներն են, հետո՝ ռուսական: Ինչ վերաբերում է թուրքականին, ապա դրանք իսպառ բացակայում են: Գավառում գոյություն ունեցող երկու տպարաններն էլ գտնվում են Շուշի քաղաքում: Դրանցից առաջինը՝ Հայոց հոգևոր տեսչության տպարանը, բացվել է 1830-ական, իսկ մյուսը, որը ևս հայկական է՝ 1877 թ.: Տեղեկատվակապերի շրջանառության և էթնիկ կոնսոլիդացիայի տեսանկյունից գրավոր խոսքը և հատկապես տպագրությունը հեղափոխական դերակատարություն ունեն: Այն ըստ էության ինֆորմացիան էլիտար շրջանակներից մասսայականացնելու դերակատարումն է իրականացրել: Եթե դիտարկենք, թե Շուշիում ինչ մամուլ է ընթերցվել, կարելի է ասել, որ շնորհիվ գրահրատարակչական գործի և մամուլի՝ Շուշիի հայ բնակչությունը մի կողմից կոնսոլիդացվել է ինքն իր ներսում, մյուս կողմից՝ ընդհանրապես հայության:

Հումանիտար մշակույթի մեկ այլ առանցքային տարր՝ թատրոնը, որը բացառապես քաղաքային մշակութային երևույթ է, Շուշիում ներկայացված ժամանակահատվածում նույնպես ունեցել է ընդգծված ազգային դեմք: Քաղաքում թատերական մշակույթի հիմնադիրները նույնպես հայերն են եղել: Առաջին թատերական ներկայացումները տվել են հայրենիքից դուրս ուսանած ուսանողները: Եղել են նաև այլ նախաձեռնողներ: Այս սկզբնական քայլերից հետո՝ 1891 թ., Շուշիում հիմնադրվում է թատրոն իր առանձին շենքով: Այս ամենի արդյունքում թատերական արվեստը Շուշիում ունեցել է բացառապես հայկական դեմք: Շուշիի հայկական թատրոնում տարեկան տրվել է միջին հաշվով 20 ներկայացում, որը Շուշիի պես ոչ մեծ գավառական քաղաքի համար մշակութային կոնսոլիդացիոն գործընթացների և կոմունիկացիայի տեսանկյունից բավական լուրջ հաճախականություն է: 1985–1986 թթ. դրանց թիվը աճել է և կազմել 24 ներկայացում՝ ամսական միջին հաշվով կազմելով 2 ներկայացում:

Ամփոփելով նշենք, որ Շուշիի գավառի հումանիտար մշակույթը էթնիկության տեսանկյունից գնահատելու դեպքում վստահաբար կարելի է պնդել, որ XIX դարավերջին ունեցել է ընդգծված հայկական դիմագիծ, և որ դրա մի շարք ոլորտներում թուրքերը՝ այսօրվա ադրբեջանցիները, մասնակցություն չեն ունեցել ընդհանրապես: Այսինքն, այդ ժամանակաշրջանում թուրք բնակչության մեջ հումանիտար մշակույթի առանցքային տարրերը ձևավորված չէին, և այն զարգացման տեսանկյունից գավառի համար ամենից անհեռանկար էթնիկ տարրն է եղել: